

րուն, չհանդուրժեցին այդ դրութեան եւ դիմեցին ասպտամբութիւններու, որոնք դար մը տեւեցին: Քիւրտերն ալ իրենք իրենց կարգին բանակներ կազմակերպեցին ենիչէրիներուն գլխադրուելու համար, եւ ընդհանուր անունով կոչուեցան Զալալի*):

Այս անիշխանութեանց գլխաւոր զոհը կը դառնար հայ աշխատաւոր հոծ զանգուածը, որ Բիւզանդական կայսրութեան ժամանակ նկատի առնուելիք հասարակական եւ քաղաքական խոշոր ուժ մը կը ներկայացնէր, եւ որ սակայն իրար խաչաձեւող արշաւանքներուն եւ այլապէս տիրապետողներուն ենթակայ ըլլալով, կորսնցուցած էր դիմադրական ամէն կորով եւ ստիպուած էր ստրկական միջոցներով յարմարուիլ ուժեղ իշխանութեան:

Հայ ժողովուրդի դժբախտութիւնը կը կայանար նաեւ այն բանի մէջ, որ ուժեղ իշխանութիւն գոյութիւն չունէր: Պոլիսը շատ հեռու էր ներքին գաւառներէն. իսկ այս գաւառները շուտ շուտ իրենց տէրերը կը փոխէին: Հայ ժողովուրդը մնացած էր թուրքի եւ քիւրտի երկու կրակին մէջ: Որպէս դարաւոր դրացի, հայը աւելի կը համակրէր քիւրտին եւ անոր հետ լեզու կը գտնէր իր գոյութիւնը պահպանելու համար. բայց, որպէս պետութեան ներկայացուցիչի, ստիպուած էր ընդունիլ թուրք տարրի եւ կառավարութեան զերակայութիւնը եւ անոր հովանաւորութեան մէջ փնտռել իր ապահովութիւնը: Այս անորոշ կացութեան մասնուած էր հայ ժողովուրդը:

Քրտական շարժումը քաղաքական լուրջ բնոյթ չունէր. հայ ժողովուրդն ալ անգոր էր, որպէսզի կարողանար ամբողջովին հակել քիւրտերուն կողմը եւ կրել պետութեան բոլոր հարուածները: Միւս կողմէ, սպաւիներով թրքական հովանաւորութեան, — որ իր կարգին կողոպտող ու ճնշող գլխաւոր ուժն էր, — հայ ժողովուրդը կը զրկուէր իր դրացի բարե-

կամութենէն եւ այսպիսով, զոհ կը դառնար ե՛ւ թուրքի ե՛ւ քիւրտի ամէն տեսակ շահատակութեանց:

Հայ ժողովուրդի այս երկերեսանի դիւրը պատճառով, անորոշ կը մնայ թէ իր եւ քիւրտերու ներքին բարեկամութիւնը ո՞ր աստիճանի սերտ էր: Նոյնպէս եւ քիւրտերու դիւրը հակասական է: Շատ պարագաներու մէջ անոնք հայերու բարեկամը կը հանդիսանան. ուրիշ պարագաներու մէջ՝ հայերուն հալածող ու կողոպտող: Բայց, ընդհանուր առմամբ, կարող ենք ըսել, որ առանց թուրքի միջամտութեան, հայերն ու քիւրտերը, այդ անիշխանական շրջանին իսկ, բարեկամութեան փաստեր աւելի տուած են, քան թշնամութեան:

Այդ անիշխանական ժամանակաշրջանի մասին, հատ ու կտոր պատմական տեղեկութիւններէն գատ, խիստ կարեւոր եւ ամբողջական գաղտփար մը կարելի է կազմել նկատի առնելով Գրիգոր վրդ. Կամախեցուոյ (Դարանաղցի) «Ժամանակագրութիւն»ը, որ մօտ 300 տարուան ձեռագիր մնալէ յետոյ՝ տպագրուած է 1915-ին, Երուսաղէմ, Նշանեան եպիսկոպոսի կողմէ: Հայերու եւ քիւրտերու յարաբերութիւնները բնորոշող շարք մը էջերու կը հանդիպինք Դարանաղցու «Ժամանակագրութեան» մէջ, որոնք հետաքրքրական են մեր ուսումնասիրած նիւթի լուսարանութեան համար:

Դարանաղցին իր մանկութեան օրերու անկարգութիւնները նկարագրած ժամանակ, հետեւեալ հետաքրքիր տեղեկութիւնը կուտայ. — «... 1590-ի Օգոստոս ամսոյն ազգն քրտաց զօրածողով եղեն, ոչ ի մեծաց երեւելի արանց. այլ յաննշանից՝ ի գողաց եւ աւազակաց եւ ի հովուաց եւ յըռամիկ շինականաց. գնալով ի վերայ Կեղու պարոնին, սպանանելով զնա եւ գտուն նորա աւար հարկանելով: Եւ սպա դարձեալ դիմեցին ի վերայ Եկեղեաց գաւառին Երզնկոյ եւ շատ վնասակարութիւն եւ հրճութիւն արարին: Եւ ոչ ոք էր իշխան եւ կամ պարոն որ ընդ դէմ գնայր նոցա»... «Ժամանակագրութիւն», էջ 23:

Ուրիշ տեղ մը նոյն հեղինակը կը գրէ. — «1595ին ել ոմն քիւրտ՝ Մահմուտ անուն ի նոյն գեղօրէիցն քրտաց, որ նախ դիւր եղբայրն սպանեն էնկիզէրէքն ի Զորա կանջէր գիւղն, եւ

*) Զալալցի նշանաւոր քիւրտ աշիրէթը մինչեւ հիմա ալ իր գոյութիւնը կը պահէ, բայց 16-րդ դարուն Զալալիներու շարժումները մէկ աշիրէթի հետ կապ չունին, այդ ընդհանուր անուն մըն էր, որ կը նշանակէ աւագակ, թալանող, սպանող: